ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆԻ

«---» ---------- 2016թ. N------Ա

ՈՐՈՇՈՒՄ

ՀՐԱՉԻԿ ՍԻՄՈՆՅԱՆԻ ՀԻՇԱՏԱԿԸ ՀԱՎԵՐԺԱՑՆՈՂ ՀՈՒՇԱՏԱԽՏԱԿԻ ՏԵՂԱԴՐՄԱՆ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 1999 թվականի օգոստոսի 31-ի «Հայաստանի Հանրապետությունում պետական և հասարակական նշանավոր գործիչներին նվիրված հուշարձանների իրականացման կարգը հաստատելու մասին» N551 որոշմամբ հաստատված կարգի 2-րդ կետը՝

Երևան քաղաքի ավագանին որոշում է.

Տալ համաձայնություն ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս, պատմական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր, հասարակական-քաղաքական գործիչ Հրաչիկ Սիմոնյանի հիշատակը հավերժացնող հուշատախտակը Աբովյան փողոց h.20 հասցեում փակցնելու համար։

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ Տ. ՄԱՐԳԱՐՅԱՆ

ՏԵՂԵԿԱՆՔ – ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

«ՀՐԱՉԻԿ ՍԻՄՈՆՅԱՆԻ ՀԻՇԱՏԱԿԸ ՀԱՎԵՐԺԱՑՆՈՂ ՀՈՒՇԱՏԱԽՏԱԿԻ ՏԵՂԱԴՐՄԱՆ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Հրաչիկ Սիմոնյանը ծնվել է 1928 թվականի դեկտեմբերի 9-ին, Գորիսի շրջանի Շինուհայր գյուղում:

1952 թվականին ավարտել է ԵՊՀ պատմության ֆակուլտետը: Աշխատել է «Խորհրդային Հայաստան» թերթում, որպես գրական աշխատող, այնուհետև՝ զործուղվել է Գորիս, որպես շրջանային թերթի պատասխանատու քարտուղար:

1953 թվականին աշխատել է ՀԿԿ Գորիսի շրջկոմում նախ՝ որպես հրահանգիչ, ապա՝ բաժնի վարիչ, 1957-1959 թթ.՝ գաղափարական գծով քարտուղար:

1959-1962թթ. սովորել է ԽՄԿԿ Կենտկոմին առընթեր հասարակական գիտությունների ակադեմիայում:

1962-1966թթ. եղել է ՀԿԿ Կենտկոմի կուսակցության պատմության ինստիտուտի գիտաշխատող, 1966-1977թթ.՝ ՀԿԿ Կենտկոմի դասախոսական խմբի ղեկավար, բաժնի վարիչի առաջին տեղակալ, 1977-1990թթ.՝ նշված ինստիտուտի տնօրեն, 1990-1991թթ.՝ ՀԽՍՀ ԳԱ պատմության և տնտեսագիտության բաժանմունքի ակադեմիկոս-քարտուղար, 1991-1994թթ.՝ սփյուռքահայության հետ մշակութային կապերի կոմիտեի նախագահ:

1986 թվականին Հ.Սիմոնյանն ընտրվել է Հայկական ԽՍՀ գիտությունների ակադեմիայի թղթակից անդամ, այնուհետև՝ իսկական անդամ:

1969 թվականին պաշտպանել է դոկտորական ատենախոսություն և ստացել պատմական գիտությունների դոկտորի աստիճան:

Հրաչիկ Սիմոնյանը եղել է ՀԿԿ Կենտկոմի անդամ, ՀԽՍՀ Գերագույն խորհրդի ներման հանձնաժողովի նախագահ, շրջանային և քաղաքային խորհուրդների, ՀԽՍՀ Գերագույն խորհրդի և ՀՀ Ազգային ժողովի պատգամավոր:

1977-1990թթ. ղեկավարել է ՀԿԿ Կենտկոմի կուսակցության պատմության ինստիտուտում գործող գիտական աստիճաններ շնորհող մասնագիտական խորհուրդը:

1964 թվականից դասավանդել է ԵՊՀ-ում և հանրապետության այլ բուհերում:

1994 թվականից եղել է ՀՀ ԳԱԱ նախագահի խորհրդական, միաժամանակ 1999- 2003թթ.՝ ԵՊՀ հայոց պատմության ամբիոնի վարիչ, այնուհետև նույն ամբիոնի պրոֆեսոր:

Տարբեր տարիների եղել է ՀՀ ԳԱԱ նախագահության անդամ:

ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս, պատմական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր, պետական մրցանակի դափնեկիր, հասարակական-քաղաքական գործիչ Հրաչիկ Սիմոնյանի հիշատակը հավերժացնող հուշատախտակը Աբովյան փողոց հ.20 հասցեում փակցնելու վերաբերյալ միջնորդություն է ներկայացվել պատմական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Էդ. Մինասյանի և ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտի տնօրեն Ա. Մելքոնյանի կողմից:

Հաշվի առնելով Հրաչիկ Սիմոնյանի աշխատանքային գործունեությունն ու ներդրած ավանդը և հիմք ընդունելով ՀՀ կառավարության 1999 թվականի օգոստոսի 31-ի «Հայաստանի Հանրապետությունում պետական և հասարակական նշանավոր գործիչներին նվիրված հուշարձանների իրականացման կարգը հաստատելու մասին» N 551 որոշմամբ հաստատված կարգի 2-րդ կետը՝ Երևան քաղաքի ավագանու քննարկմանն է ներկայացվում սույն որոշման նախագիծը:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ Տ. ՄԱՐԳԱՐՅԱՆ

ՏԵՂԵԿԱՆՔ

«ՀՐԱՉԻԿ ՍԻՄՈՆՅԱՆԻ ՀԻՇԱՏԱԿԸ ՀԱՎԵՐԺԱՑՆՈՂ ՀՈՒՇԱՏԱԽՏԱԿԻ ՏԵՂԱԴՐՄԱՆ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ ԵՐԵՎԱՆԻ ԲՅՈՒՋԵՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԵՎ/ ԿԱՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

«Հրաչիկ Սիմոնյանի հիշատակը հավերժացնող հուշատախտակի տեղադրման մասին» որոշման նախագծի ընդունման կապակցությամբ Երևանի բյուջեում լրացումներ և/ կամ փոփոխություններ կատարելու անհրաժեշտություն չի առաջանում:

ՏԵՂԵԿԱՆՔ

«ՀՐԱՉԻԿ ՍԻՄՈՆՅԱՆԻ ՀԻՇԱՏԱԿԸ ՀԱՎԵՐԺԱՑՆՈՂ ՀՈՒՇԱՏԱԽՏԱԿԻ ՏԵՂԱԴՐՄԱՆ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ ԱՅԼ ԻՐԱՎԱԿԱՆ ԱԿՏԵՐՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԵՎ/ ԿԱՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

«Հրաչիկ Սիմոնյանի հիշատակը հավերժացնող հուշատախտակի տեղադրման մասին» որոշման նախագծի ընդունման կապակցությամբ այլ իրավական ակտերում լրացումներ և/ կամ փոփոխություններ կատարելու անհրաժեշտություն չի առաջանում:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ Տ. ՄԱՐԳԱՐՅԱՆ